



ԶԵԲԵԼ-ՄՈՒՍԱՅԻ ԲԱՐԲԱՌԸ¹

3. ԶԵԲԵԼ-ՄՈՒՍԱՅԻ ԲԱՐԲԱՌԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ
ԵՎ ՄԻ ԽՈՒՄՔ ԲԱՌԵՐԻ ԱՌԱՋԱՉԱՄԱՐԴՐՅԱՆՆԵՐԸ

Զեբել-Մուսայի բարբառը պատկանում է հայ բարբառագիտության կը (կու) ճյուղին:

Զախարանական տեսակետից նշելի է ձայնավորների գրեթե միշտ կատարվող ձայնափոխումը, խուզ բաղաձայններից առաջ ձայնավորների մերժածումը իւ (յու) -ի:

Հևարանական տեսակետից աշքի ևն զարնում երկու երևույթ. նախ հոգնակի կազմելու բազմաթիվ ձևեր, որոնք գոյրություն շունչն ո՞չ դրական հայերենում և ո չ էլ մի այլ բարբառում, և երկրորդ՝ անորոշ լծորդության իւ վերջափորությունները: Հին հայերենի բոլոր շորս լծորդությունները՝ ել, իլ, ալ, ու և նրանց մյուս կերպարները՝ նել, նիլ, նալ, նուլ անորոշ դերբայում, բարբառում անխտիր վերածվում են իլ ձեի, իսկ որպես առանձին լծորդություններ հանդես են զալիս խոնարհման ժամանակ:

Աշքի զարնող երևույթներ են նաև զը և յը հետադիրների գործածությունը դերանումների փոխարեն և շահմանափակվող բայակերսումը թե՛ հայերեն և թե՛ փոխառյալ արմատներից:

Զափազանց նշանակալից է նաև Զեբել-Մուսայի բարբառում գործածվող դավառական և բարբառին հասուկ բառերի առատությունը (մոտ 400), որմաց ուստանափորթյունը նոր ներդրում կհանդիսանա թե՛ հայ բարբառագիտության և թե՛ հայոց լեզվի հետագա ուսումնասիրման գործում:

Այս առանձնահատկություններով, Զեբել-Մուսայի բարբառը իր ուրույն դիրքն է գրա-

1. Ակիրը տե՛ս «ՀՀմիածին» ամսագրի 1952 թվականի մարտի համարում:

վում հայ բարբառագիտության մեջ և իրավունք է ստանում գիտական լուրջ ուշադրության:

Այսուղեղ հատկապես անհրաժեշտ է նշել երկար շարանն այն բառերի, որոնք ենթարկվել են յուրօրինակ իմաստափոխման կամ հին հայերենի տվյալ բառի վրա մի յուրահատկություն են ավելացրել:

1. Բարբառում գոյություն ունեն մի շարք բառեր, որոնք հին հայերենի իմաստից ամբողջվին այլ իմաստ են ստացել, բայց որոնք իրենց հին իմաստով ի հայտ են գալիս միայն ասացվածքների, արտահայտությունների մեջ. օրինակ.

ա. Հին հայերենի յիշել բայլը ձայնափոխվելով դարձել է իշիլ, որը բարբառում նշանակում է նայել. սակայն որ դա իրոք յիշել բայն է, հանդես է դալիս երկու արտահայտությունների մեջ. «ՅԱՍՊՌԱ իշէ»—«ԱՍՊԾՈՆ հիշիլ», ասացվածք, որը գործածվում է մեկին վախեցնելու վամբ բարություններշնչելու, և «Փշուծը պարեն»—«Հիշատակությունը բարի», որն ասվում է հեռավոր ազգականին կամ ծանոթին խոսակցության ժամանակ հիշելիս:

բ. Հին հայերենի պապ բառը ձայնափոխվելով դարձել է բուր, որը բարբառում ստացել է երկու իմաստ՝ 1. կենահայր, քավոր, 2. քանական (քահանայի համար կա նաև ուրիշ բառ՝ իրից—երեց). իսկ որ դա իրոք պապ բառն է, հանդես է դալիս արտահայտությունների մեջ, օրինակ. «Մից բարգրդեն խիլիք մարդաք էրին»—«մեր պապերը խելացիք մարդիկ էին», կամ «Փրկինց բարգրդեն վախելք»—«իրենց պապերի ժամանակ»:

2. Բազմաթիվ են այն բառերը, որոնք հին հայերենի ընդհանուր իմաստից պահել են միայն մի երանդը, իսկ բառի լայն առումով նշանակությունը կամ վերցվել է մի օտար լեզվից և կամ գործածվում է հայերենի մի ուրիշ հոմանիշը. օրինակներ.

ա. Ուղեղ բառը ձայնափոխվելով դարձել է դող, որը բարբառում նշանակում է ուկորի ծուծ, իսկ ուղեղ բառի փոխարեն գործածվում է թյուրքերեն վեյն բառը:

բ. Դեղ ձայնափոխվելով դարձել է դիղ, որը բարբառում նշանակում է միայն բուճալոր դեղ, այստեղից դիղիլ—բուճավորել, իսկ դեղ բառի փոխարեն գործածվում է թյուրքերեն իլլաջ բառը:

գ. Խնդրել ձայնափոխվելով դարձել է խնդրիլ, որը բարբառում նշանակում է մեկին բարիք մաղթել, բարեմաղթություն անել, իսկ խնդրել բայի փոխարեն գործածվում է նրա հայերենի մյուս հոմանիշը՝ աղաչել — աղչիլ:

դ. Գրպան ձայնափոխվելով դարձել է կրարոն, որը նշանակում է ծոցագրպան, իսկ գրպան բառի փոխարեն գործածվում է թյուրքերեն ջիր բառը:

ե. Թափել ձայնափոխվելով դարձել է թափիլ, որը բարբառում նշանակում է կերակուր լցնել, իսկ թափել բառի փոխարեն

ա. հայել ձայնափոխվելով հիյիլ բարբառում նշանակում է սպասել

բ. պառկել » բառզիլ » » ընել

գ. իմանել » իմելիլ » » զարթել

դ. քանել » քնտիլ » հափշտակել

ե. պարել » բարիլ » » սպալ, ողբալ

զ. դադարել » դադրիելիլ » » հոգնել

է. մշակ » մբշլըք » » աշակերտ

ը. անել » իչիլ » » հրաշքով շատանալ

թ. եղրօր կին » աղբըքզեն » » հորեղրօր կին

ժ. տապալել » բարլիլ » » բիկն տալ

Բառերի այսօրինակ ձայնափոխումը պետք է բացատրել այդ բառերի ունեցած երանդներից մի երանդի ընդհանրացումով կամ մի երանդի շեշտումով: Օրինակ. հայել հին հայերենում նշանակում է հայել, իսկ բարբառում ստացել է սպասել իմաստը, այսինքն նայել մեկի, մի բանի համար, մեկի ճանապարհին նայել, ինչպես ժողովուրդն է առաջ առաջ ճամբիդ նայելով շուր դառնալ, այսինքն՝ տերկար սպասեցին: Նույնն է պարագան իմանալ բառի համար, որը բարբառում ստացել է զարթել իմաստը, այսինքն քնած ժամանակ մարդ ոչինչ չի համանում, ոչինչ չի ըմբռնում: այլ զարթ-

գործածվում է զուտ բարբառին հատուկ ֆիրիլ բառը:

զ. Առատ ձայնափոխվելով դարձել է ըրբուտ, որը նշանակում է ածան, իսկ առատ բառի փոխարեն գործածվում է թյուրքերեն բուլ (բուլ) բառը:

է. Ուրալ ձայնափոխվելով դարձել է իրսիլ, որը բարբառում նշանակում է միայն զիշերով ուսալ, իսկ ուրալ բառի փոխարեն գործածվում է թյուրքարմատ ալ ինիլ բառը:

ը. Ընտանի ձայնափոխվելով դարձել է ընդական, որը բարբառում նշանակում է ազգական, իսկ ընտանի բառի փոխարեն գործածվում է դանա բառը (ընդականի ընդիկլ է):

Հավանական է, որ այս բառերի երկար շարանը ժամանակին լայն գործածության մեջ է եղել բռն առումներով, սակայն հետագայում օտար լեզուների ազդեցությունը մի կողմից, հայերից կտրված լինելը մյուս կողմից, սպատճառ են դարձել, որ այսպիս մնա բառի մի երանդը միայն հաճախ իմաստափոխված:

3. Ամենից հետաքրքիրը սակայն բառերի այն շարանն է, որոնք հին հայերենում իրենց ունեցած իմաստից ամբողջովին տարբեր իմաստ են ստացել, այսպիսով ստեղծելով բարբառում նոր իմաստ ստացած բառերի մի մեծ խումբ: Ահավասիկ օրինակներ.

նելուց հետո է հասկանում, ըմբռնում: Ահա այդ երանդներն են, որ շեշտվել են և իրենց կնիքը դրել ամբողջ բառի վրա: Պարել բառը ձայնափոխվելով դարձել է բարիլ, որը նշանակում է բարբառում սպալ, ողբալ, և գործածվում է հատկապես աղջկա հարս եղած ժամանակ և մեկնելիս ողբայուն: Հալունի է, որ հարս տանելին պարում են, երդում. նույնն է եղել պարագան նաև հնում թաղում կատարելիս, որը երգ ու պարով է կատարվել, և ահա այդ առարկայական իմաստը վերածվելով վերացականի, պարել բառը բարբառում ստացել է ամբողջովին այլ իմաստ՝ սպալ, ողբալ:

Սակայն ամենից զարմանալին տառ բառի իմաստափոխումն է: Տառ ձայնափոխվելով դուդ, բարբառում նշանակում է հայր. նույնն է նաև տատիկ — դադաք — հայրիկ: Զարմանալի է բառի սեռի և իմաստի այսօրինակ ձայնափոխումը, այնինչ մայր բառը սովորական ձայնափոխմամբ պահել է իր իմաստը մայր — մար: Բարբառում մեծ մայր ձևն էլ չկա տառ-ի փոխարեն. մեծ մայր ձայնոփոխվելով մինձ մար, նշանակում է մանկաբարձ կին, իսկ տառ բառի փոխարեն գործածվում է թյուրքերեն նաևն բառը:

4. Որ ջերել-Մոսայի բարբառում հնույն ավելի շատ են եղել հայերենի ձայնափոխված բառերը և միայն հնտագայում մի կողմից օտար լեզուների ազդեցությամբ և մյուս կողմից հայկական միջավայրից կտրված լինելու պատճառով շատ բառեր են դրս մըդ-վել բարբառից և դրանք երթեր չեն գործածվում և կամ փոխ են վերցվել օտար լեզուներից, դրա վետ ապացույցն այն է, որ բարբառում հատկապես արտահայտությունների, անհեքսների, ասացվածքների կամ հատուկ պարագաների մեջ հանդիս են գալիս բառեր, որոնք առանձին վերցրած գործածական չեն: Ահավասիկ արդպիսի մի քանի արտահայտությունների օրինակներ:

ա. «Գրիւր-բարը դրդ ընենու» — «կտոր պատառ թող լինես», այստեղ հանդիս եկող գիրիւր — կտոր բառը այժմ որպես առանձին բառ գործածական չէ:

բ. «Էմ բարզոն արբուծ դուրը» — «իմ պապի ապրած դարը». այստեղ հսնդիմ եկող դար — դիւր բառը այժմ որպես առանձին բառ գործածական չէ:

գ. Բասաւորիլ, ձայնափոխումը սպասաւորել բայի, որը գործածվում է միայն եկեղեցում ծառայություն կատարելու համար, իսկ ուրիշ դեպքերում գործածական չէ:

դ. Օտար բառը ձայնափոխվելով օդիւր, գործածվում է հարեան համերին բակից թշելիս, որպես օտարների, իսկ առանձին վերցրած գործածական չէ:

ե. Հրամել բառից մնացել է միայն եզակի հրամայական՝ հրամէ՝ հրմմէ՛, կանչողին պատասխանելու, իսկ ուրիշ դեպքերում այդ բայը գործածական չէ:

զ. Զիւր (ձոր) և Փիրը (բերդ), որոնք միայն հատուկ տեղի անուններ են հնուց մնացած, իսկ այժմ որպես առանձին բառեր գործածական չեն:

է. Նուվ (նու) և նանարիկ (նանապետ) գործածվում են միայն նոյն նահապետի պատմության համար, իսկ ուրիշ դեպքերում գործածական չեն:

ը. Ընկրումը ձայնափոխվելով ընզորմիլ, գործածվում է միայն անհեծքի մեջ. «Երզը բոլորի դրդ ընզորմես» — «մինչև կոկորդդ թող ընկրումիլս»:

5. Վերեւը (§ 4-ում) ասվածը նույնությամբ կարելի է կրկնել նաև այն բառերի համար, որոնք բարբառում կամ գոյական ունեն և բայ չունեն և կամ բայ ունեն և գոյական չունեն. ահա՝ մի քանի օրինակներ.

ա. Գոյ որպես գոյական գոյություն չունի բարբառում. գործածվում է արարերեն հարամա բառը, սակայն որպես բայ կա կուղելի — գոյանալ:

բ. Սուտ խոսել որպես բայ գոյություն ունի բարբառում՝ սօդ խուսիլ, սակայն ստախոս բառի փոխարեն գործածվում է թյուրքերեն յալանշա բառը. շատ հազարդիկ գործածվում է նաև սօդ խուսիլ (սուտ խոսոլ):

շ. Հիւանել որպես բայ և գոյական կարբրառում՝ հիվունա — հիւանդ և հիվըննիլ — հիւանգանալ. սակայն չկա հիւանդանոց բառը. գործածվում է թյուրքերեն խասդախանա:

դ. Սիրել որպես բայ կամ սիրիլ, սակայն կոյականը՝ սէր չկա. գործածվում է թյուրքեն սէրա բառը:

Վերեւ հիշված բոլոր կետերը անժխտելիորեն ապացուցում են մի բան, որ հնում բարուառ ավելի հարուստ է եղել հայերեն բառերով և հնտագայում միայն դրանք դրս են մըդվել: Յավալի է, որ բարբառում ոչինչ չի պահպած, ոչ մի հին գրավոր փաստաթուղթ, որից հնարավոր լիներ ավելի ճշգրիտ և ավելի փաստացի հետևություններ անել: Բերանացի կերպով պահպանված հերթաթները, լեզենդները ըստ սովորականի դարձել են նոր բառապաշարով և դժվար է դրանցից սկսովել:

Անհրաժեշտ է նաև նշել, որ վերև հիշված օրինակները գեռևս լրիվ չեն ընդգրկում բարբառի նմանօրինակ արտահայտությունները. ես աշխատել եմ միայն դրանցից ամենից ցայտունները տալ:

Ա Մ Ա Ս

ՀՆԳՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հնչյունախոսություն

1. Ջերել-Մուսայի բարբառի հնչյունաբանության մասը որոշ նմանություններ ունի Կոստանդնուպոլիսի, Համշենի և Նոր-Նախիշեանի բարբառների հետ, հատկապես բաղաձայների հնչյունաբանության մեջ:

Ջերել-Մուսայի բարբառն ունի 44 հնչյուն, որոնք բաժանվում են հետևյալ ձևով՝ ձայնավորներ 11 հատ, բաղաձայններ 33 հատ:

Ձայնավորներն են՝ ա, ա՛, է, օ, ի, ո, օ՛, օ, ու, իւ:

Բաղաձայններն են՝ բ, պ, փ, գ, կ, ք, գ՛, կ՛, ք՛, ք. դ, տ, թ. ծ, ձ, ց. ռ, ը, լ, վ, լ՛, ն, ին, դ, ո, ժ, ֆ, ջ, թ, ջ՛:

2. Ձայնավորներից ա—էա, օ—էօ, ու—էու հնչյունները բարբառում շատ գործածական են, որը պետք է բացատրել թյուրքերների աղդեցությամբ:

3. Հնչյունաբանության մեջ ես առաջնորդ-վել եմ Հաջի-Հարիրլիի մասնաճյուղով (գյուղեր № 1, 2), իսկ մյուս մասնաճյուղերի մեջ կան էական տարբերություններ:

Ցողուն—Օլուրի մասնաճյուղով (գյուղեր № 3, 4, 5) նկատելի է նաև երկրարառների առաջությունը, ինչպիսիք են էիւ, առւ, էույ և այլն, որոնք մեծ մասամբ գործածական չեն Հաջի-Հարիրլիի մասնաճյուղով:

2. Զայնավորների փոփոխություն

Ա.

5. Հին հայերենի ա ձայնավորը Ջերել-Մուսայի բարբառում փոխվում է գորեք միշտ:

Միավանկ բառերի բառասկզբում ա դառնում է ու. արջ—ուրջ, ափ—ուփ, ամպ—ումպ:

Միավանկ բառերի բառասկզբում ա դառնում է ա. աւել—ավիլ, ասեղ—ասիղ, արե—արիվ, ասել—ասիլ, աղաշել—աղիլ, ամաշել—ամբշել:

6. Բազմավանկ բառերի բառասկզբում ա դառնում է ա. աւել—ավիլ, ասեղ—ասիղ, արե—արիվ, ասել—ասիլ, աղաշել—աղիլ, ամաշել—ամբշել:

Բացառություններ են՝ ա—ի. անել—ինիլ, ալիւր—իլէր, անել—իջիլ:

ա—ի դառնալուց հետո ակզրում ավելացել է վ. արին—վիրեն:

Բառասկզբի ա-ն ընկել է. առողջանալ—շողնիլ, աշակերտ—շակրբը:

7. Միավանկ բառերի բառամիջում եթե ա

Քերոսինի և Քեսարի մասնաճյուղերում (գյուղեր № № 6, 7, 8) անշափ շատ է յ կիսաձայնի գործածությունը յուրաքանչյուր ձայնավորից առաջ և հետո: Այս մասնաճյուղերում հատկանշական է ձայնավորներից առաջ ը-ի գործածությունը, որն ստեղծում է յուրահատուկ երկրարառներ՝ ըօ, ըիւ, ըա, լու, ըա:

Բաղաձայնները շատ անշան տարբերությամբ նույնն են:

4. Բաղաձայններից քմայնացել են միայն երեք՝ գ՝, կ՝, թ՝, որը թյուրքերնի ակներն ազդեցությունն է և մեծ մասամբ գործածվում է փոխառյալ բառերի մեջ, սակայն հաճախ և պատահում է ձայնափոխված բառերի մեջ. օրինակ. կույր — կ'այր, գարուն — կ'արօն և այլն:

Բարբառում գործածվում է նաև արաբերն—թյուրքերն զ (՞) հնչյունը, կոշտացած է, թե՛ փոխառյալ և թե՛ ձայնափոխված բառերի մեջ:

Բարբառում գործածվում է նաև չ բաղայնը, որպես բարբառի հնչյունների մաս կազմող մի բաղաձայն: Ինչպես հայտնի է, այդ բաղաձայնը գործածական չի նղել և հին հայերենում մ' մեր մյուա բարբառներում²:

3. Զայնավորների փոփոխություն

ձայնավորին շի հաջորդում գ, կ, թ, բաղաձայնների միջև ա դառնում է ու. ծառծուու, հաց—հուց, պատ—բուտ, թաս—ուս, մարդ—մուրդ, հարց—հուրց, ծափ—ծուփ:

8. Եթե ա ձայնավորին հաջորդում է գ, կ, թ բաղաձայններից որևէ մեկը, ապա միավանկ բառերի բառամիջում ա դառնում է օ. ծակ—ծօկ, խակ—խօկ, բակ—բօկ:

Բացառություն է պագ—բիւ, որ նշանակում է 1. համբույր, 2. համբուրդիր, 3. սոխի ծաղիկ, 4. պաս:

9. Բազմավանկ բառերի վերջին վանկում ա դառնում է ու. իսկ նախորդ վանկերում ա դառնում է ա կամ մնում ա. պարան—բարան, աման—ամուն, կարան—գարուն, ամբար—ամպուր, ծարաւ—ծարուվ, ասան—ասուն:

2. Տե՛ս «Եղմիածին» ամսագիր, 1952 թ. մարտ, է 36.

10. Բազմավանկ բառերի բառամիջում են ան ձայնավորին հաջորդում է գ, կ, թ, խ և դ բաղաձայններից որևէ մեկը, ապա առանում է իւ, նախորդ վանկի ան դառնում է ա, իսկ գ, կ բաղաձայնները դառնում են թ. տախտակ — դախտիք, պատարագ — բարարիք, բացախ — բացիխ, կոնակ — գիշիք, բարակ — պարիք, մարդակ — մարդիք:

11. Երկուսից ավելի վանկեր ունեցող բազմավանկ բառերի մեջ երր իրար են հաջորդում երկու ա, սովորաբար մեկն ընկնում է, իսկ մյուսը կամ մնում է ա, կամ դառնում ա. պազանել — բաֆնիլ, սատակել — սատիկիլ, շալակել — շալիկիլ, մատաճի — մադճա, հարսանիք — հարսնաք, ցամաքել — ցամեքիլ, հեռանալ — հիռվենիլ, հասկանալ — հասգրենիլ, հաւանել — հավենիլ, կարկատել — գարգրդիլ, պատառել — բադովիլ:

Կրօնական առումով միայն գործածվող մի քանի բառերի մեջ ա չի ընկել, այլ միայն ձայնափոխվել է. պատարագ — բաղարիք, շարշարել — շարշարիք, աւազան — ավազոն:

12. Եթե ա ձայնավորին հաջորդում է ն, չ, շ տառերից որևէ մեկը, բաց վանկում առանում է ի. կաշի — զիշա, պաշար — բիշու, խաշել — խիշիլ, անել — իշիլ, մաշել — միշիլ, աշուն — իշշոնիք, աշեներ — իշվա, բաշել — իշշիլ, խաշել — խիշիլ:

13. Երկու պարագաներում հին հայերենի ա ձայնավորը մնում է անփոխիս.

ա. Եթե ա ձայնովորին հաչորդում է ն, չ, զ, թ, ջ, նշ, նն հնչյուններից որևէ մեկը փակ վանկում. նաևն — զանզ, ականզ — ագանզ, ման — մազ, կանաչ — գանաչ, առաջ — յառաջ, գան — զազ, աւաշ — պաշա, աչ — աշք, երաշք — իրաշք, խաշ — խաչ, ժանզ — ժանզ:

Այս պարագային նախորդ վանկի ան էլ պահում է իր նույն հնչյունը ձայնական ներդաշնակության համար:

բ. Եթե հին հայերենում բառը վերջանում է ի ձայնավորով, որը բարբառում դառնում է ա, ապա ձայնական ներդաշնակության համար նախորդ վանկի ա ձայնավորը մնում է անփոխիս ա. մատաճի — մադճա, ընտաճի — ընդճանա, տանձենի — դանցինա, կանճի — կանանա, անճի — ալլա:

14. Կար բառը կարի իմաստով դառնում է գուր, իսկ մարդու, անասունի կար իմաստով դառնում է գէր, որը մնացորդն է հնու՞ր գործածական և մինչև այժմ էլ որոշ բառերի մեջ մնացած կիր բառի. օրինակ ձկնիր, հաւկիր:

15. ա բառավերջում դառնում է օ. նիմանիմօ, նապանիմօ, գնանիմօ և ալլն:

16. Խոնարհման, ածանցման, հոլովման կամ բարդության ժամանակ հաճախ ա ձայնավորը նորից ձայնափոխվում է. ամպումը — ամբօնիք, աւաշ — ավշիր, հազ — հուզ — հացիր, ականչ — ագանչ — ազրենչիլ, ընտաճի — ընդճանա — ընդանաք, բար — բուր — բարօդ:

Ե

17. Միավանկ բառերի բառասկզբում ե դառնում է ի. ես — իս, ել — իլ, եմ — իմ: Երբ մակրայը դարձել է յիփ:

18. Բազմավանկ բառերի բառասկզբում, հատկապես ը բաղաձայնից առաջ, ե դառնում է ի. երես — իրիս, երեց — իրից, երինչ — իրինչ, երկար — իրզուր, երկան — իրզան, երեկոյ — իրիզօն, երազ — իրուծ, երել — իրիլ:

19. Ելանել բայրը դարձել է ընենի (ե — ը, սովել է լ). երկու և երեք թվականները դարձել են ըրգօ՛օ, ըրբ:

20. Թի՛ միավանկ և թի՛ բազմավանկ բառերի բառամիջում ե դառնում է ի. ցեցցից, կե՛ր-զի՛ր, նետ-նիր, քեփ-քիփ, խելի — խիլի, նամեմ — նամիմ, ասեղ — ասիղ, վարժապետ — վարժարիդ, արեւ — արիվ, ձեւել — ձիվիլ, արեք — ափիք:

21. Ե ձայնավորը կամ ընկել է կամ ը է դարձել հետևյալ բառերի մեջ. խեշիփառ խըշըպուտ, սեղմել — սըղմիլ, երեք — ըրք, երսկոյ — իրիզօն, բարնկենրան — պարզբնիմեն, նիշշտակ — նըրշիլիք, գերեզման — զըրզմուն, նեփի — քըռա, նեռակին — քըռքին, ունենալ — ունընիլ: Բացառություն է ձեռ — ձառ բառը (ե — ա):

22. Բառասկզբի ե ձայնավորը ընկել է. եղունգ — զոնկ, եկեղեցի — զիղիցա:

23. Բառասկզբի ե դարձել է ու. Երբալ — սորիլ երդում — ուժքում:

24. Առանձնահատուկ է եղբայր բառի ձայնափոխումը, որը դառնում է ախպար: Ակաղեմիկոս Հ. Աճառյանի կարծիքով դա հին հայերենի երկորորդ ձեկից՝ աղբայրից է մնացել:

25. Անօրինակ ձայնափոխում է եւեսուն բառը, որը դարձել է յարսօն. սա բառասոն բառի հետ ձայնական ներդաշնակության արդյունք է:

3. Տե՛ս Հ. Աճառյան, «Թննություն Պոլսու բարբառեան», Երևան, 1941 թ., էջ 35, § 17: Տե՛ս նաև նույն «Թննություն Համշենի բարբառի», Երևան, 1947 թ., էջ 26, § 18:

Նույնպիսի բացառություն է ուղեղ բառի ձայնափոխումը, որը բարձել է դօղ, բառամբիշի և — օ ձայնափոխմամբ, որը բարբառում նշանակում է ուկորի ծուծ:

է

26. Բառասկզբում պատահող բառերի մեջ է դառնում է ի. էշ — իշ, էշութիւն — իշութեն:

27. Թե՛ միավանկ և թե՛ բազմավանկ բառերի մեջ է դառնում է ի. դէմ — դիմ, խլէզ — խլիզ, կէս — գիս, ձէք — ձիք, գոմէշ — կիմիշ, մէշ — միշ, գէր — կ'իր, երէց — իրից, երէկ — իրիք, մէշք — միշք, աէր — դիր, շէն — շին:

28. Բառավերջում պատահող երկու օրինակները տարրեր տարրեր ձեւեր ունեն, կիւրակէ—գիրագէ—գիրագա, մարգարէ—մարգարա:

29. Էական բայի է, էինք, էին ձեւերի բառասկզբի է-ն նույնությամբ մնում է բարբառում:

լ

30. Ը ձայնավորը բարբառում բառասկզբում առեասարակ մնում է անփոփոխ. բնտանի — բնդանա, բնկեր — բնզիր (կա նաև ինզիր), բռուպ — բռուպ: Բացառություններ են՝ բնտրել — բնենդրիլ (ալելացել է ի) — կա նաև բնտրիլ, բնկոյզ — ունգայզ (ը-ու), բնկուզենի — ունգրզինա (ը — ու), բնձափիծ — օնձ (ը — օ):

31. Բառամիջում ը ձայնավորը կարուղ է տեղափոխվել, կարող է անհնտանալ, կարող է պահել իր տեղը. խնձորենի — խրճցրինա, բրանել — բրդրնիլ, նենցուկ — զրեցրօֆ, փրփել — փրդիրիլ, ներշանկ — ներշշուիլ, լսել — լսիլ, կրել — զըրիլ, կացել — զդցիլ, սրբութիւն — սրբութեն:

32. Բառավերջում, երկու կամ երեք բառաձայնով վերջացող բառերի մեջ, հատկապես ը բաղաձայնից առաջ ը ավելանում է հնչման հետության համար. սահմար — սունդր, մանր — մունդր (մանր-ի հին ձեւը ը բաղաձայնով), հօսր — նուսր, բարձր — պոնցր, մեղր — միղր, տագր — դակր, բանձր — բոնձր, նիպու — շաբրո:

ի

33. Ի ձայնավորը միավանկ բառերի բառասկզբում դառնում է է. ինք — էնք, ինը — էննը, իր — էր, իմ — էմ:

34. Բազմավանկ բառերի բառասկզբում ի մնում է ի. իշանել — իշնիլ, իշխնել — իշխնիլ, իշխող — իշխիտ:

Ամբողջովին յուրահատուկ ձայնափոխում է նգնաթիոս հատուկ անունը, որը դառնում է Դադուս:

35. Միավանկ բառերի բառամիջում ի դառնում է է. բիզ — բէզ, նին — նին, ցից — ցէց, միս — միս, գիր — կ'իր:

36. Բազմավանկ բառերի վերջին վանկում ի դառնում է է կամ ա, պահիր — բանէր, խինին — խլէնի, ալիի — ալաք, շապիկ — շաքաք, շամիշ — շամէշ, ամիս — ամէս, բանալիք — պալէնի, երկինի — իրգէնի, գետին — կիդէն, ծաղիկ — ծաղակ:

37. Բազմավանկ բառերի նախորդ վանկում ի մնում է ի. սիրել — սիրի, գիշեր — կ'իշիր, շինել — շինի, տիրանալ — դիրանի, անիծել — անիծի, սիրուն — սիրօն:

38. Բառավերջին ի ձայնավորը անխափիր դառնում է ա. այզի — իբբա, նոզի — նիբբա, կաղնի — գաղնա, աւելի — պիլիա, լեղի — լիղա, փոշի — փիշա, կաշի — գիշա, ոսկի — իսկա, նայելի — նիլիլա, ընտանի — ընգանա: Նույնն է պարագան փոխառյալ բառերի:

39. Երեք բառի մեջ բառավերջի ի ձայնավորը դարձել է էն. ըի — բէն, ձի — ձէն, դրացի — դրացէն:

40. Սառերի անունը կերառող ենի մասնիկը անխափիր դառնում է ինա. խնձորենի — խրճցրինա, բգենի — բրգինա, տանձենի — դանցինա, մորենի — մրբմինա, դեղձենի — դիղցինա:

41. Բառամիջի ի ձայնավորը ընկել է հետևյալ բառերի մեջ. դարիվեր — դուրփիր, դարիվայր — դուրփար, երիկամունիք — իւզամնօֆ:

42. Անորոշ լծորդության ի վերջավորությունը մնում է անփոփոխ:

Ո

43. Ո ձայնավորը միավանկ բառերի բառասկզբում դառնում է վը. ուռ — վլդ, որձ — վրց, ոսպ — վլսպ: Ուրդ բառը դառնում է վիր (ո — վի):

44. Բազմավանկ բառերի բառասկզբում ո դառնում է ի. ոսկի — խսգա, ոչիլ — իշել, որոնալ — իրջիլ: Բացառություն է ողորմել — ողուրմիլ (ո — իլ):

45. Միավանկ բառերի բառամիջում ո դառնում է ի. սոխ — սիխս, փլս — փիխս, նող — նիխու, գոգ — կ'իխիք, նոտ — նիխու, նոր — նիխը, պորս — բիխու, նոր — նիխը: Բացառություններ են չորս — չուրս (ո — ու), մոմ — միմ (ո — ի):

46. Բազմավանկ բառերի բառամիջի վերջին վանկում ո դառնում է ի. քրոց — կրիս,

վլենոց—վզնից, ուկոր—իսպիր, աղտոտ—աղդիս, խանձող—խանձիս:

47. Բազմավանկ բառերի նախորդ, երկրորդ վանկում ո դառնում է ի. փոշի—փիշա, բորշոմիլ—բիշմիլ, կոփիշ—գիփէշ, փորել—փիրիլ, ցորեան—ցիրին, կոխել—զիխիլ, մորեխ—միրիխ: Բացառություն է մոխիր—մախիսէր (ո—ա):

48. Բազմավանկ բառերի մեջ, որտեղ ներկու ո իրար հաջորդական վանկերում են դոնվում, սովորաբար առաջին ո-ն ձայնափոխում է, իսկ երկրորդը ընկնում կամ դառնում ը. սովորել—սուրչիլ, բռոնմել—բիրմիլ, ծողովել—ծովվիլ, ոռնեալ—իրջիլ, բրոտել—պիրքիլ, խոստովանել—խոստրվանիլ, ողորմել—ուղուրմիլ:

49. Բազմավանկ՝ երկուսից ավելի վանկ ունեցող բառերի մեջ ո ձայնավորը ընկնում է կամ դառնում ը. խճորենին—խրեցրինա, կայծոռիկ—գրնձրաք (դեմքի, մարմնիքտիկ), շնորհավոր—շընքֆիր:

Ողկոյց բառի բառասկզբի ո—ու ինչպես և հաջորդ բաղաձայնը ընկել են. ողկոյց—զայզ:

ՈՒ

50. Միավանկ բառերի բառասկզբում ու դառնում է օ. ուլ—օլ, ութ—օթը, ուլու—օլու, ուս—օս:

Ո՞ւր—յո՞ւ վերցվել է պրաբարի յո՞ւ ձեզից և հնչվում է յ կիսածայնով:

51. Բազմավանկ բառերի բառասկզբում ու մնում է ու. ուտել—ուլի, ուրագ—ուրիմ, ուրբար—ուրպոր, ունենալ—ունքիր, ուզել—ուզի:

52. Բառասկզբում ո բաղաձայնից առաջ ու ընկնում է. ուղարկել—զուրգիլ, խուսգիլ, ութեղ—զօղ (Հմմտ. § 49): Բացառություն է ուղիղ—իսպիրը բառը, որը, ինչպես մյուս ձայնավորը, խոր բաղաձայնից առաջ դարձել է իւ:

53. Միավանկ բառերի բառամիջում ու դառնում է օ կամ օ. դուռ—դօռ, ջուռ—ջօռ, ծուկ—ծօկ, մուկ—մօկ, մոխ—մօխ, սուս—սօս, բաւր—բօր, բուրդ—փօրբ:

54. Բազմավանկ բառերի բառամիջի ուն դառնում է օ. գլուխ—կ'ըլօխ, փրփուր—փրփօր, կակուր—գ'ազօղ, ամուր—ամօր, ապուր—արօր, մօրուր—մուրօ:

55. Բազմավանկ բառերի բառամիջի նախորդ վանկերում ու մնում է անփոխիս ու. պատրուսիլ—բարբառիլ, լուսանալ—լունիլ, կուրանալ—գունիլ:

56. Բառավերջում ու դառնում է օ, կըրկնը վում է նախորդող բաղաձայնը. նեռու—ինու, լեզու—լիզզո, բրու—բըրրօ, առու—առու, լու—լօ: Բացառություն է երկու—բրգը, բրգօֆ թվականը (ու—ը):

Եղբակացություն

57. Զայնավորների կրած փոփոխությունները պարզ ցուց են տալիս, որ Զերել-Մուսայի բարբառամ, չաշված աննշան դեպքերը, ձայնավորները գրեթե միշտ ենթարկվում են փոփոխման:

Զայնափոխման համար սահմանված կանոններից մեծ մասը բացարձակ չեն, ամեն ինչ ունի իր բացառությունը, և երբեմն բացառություններն ավելի շատ են քան սիստեմի վերածված ձայնափոխումները:

Զերել-Մուսայի բարբառի ձայնավորների փոփոխությունը նմանության գծեր չունի ո՛չ մի այլ բարբառի հետ, հարց, սրից և հետևում է նրա գրեթե անհասկանացի լինելը բարբառին անծանութ մարդկանց: Որպես օրինակ վերցնենք ա ձայնավորը, որը բարբառում փոփոխմ է հնատելալ ձայնավորներին. ա, ա, ը, ի, ու, օ, օ՛, իւ:

Լեզվի ձայնավորների առանցքը կազմող ա, ե, է, ի, ու ու ձայնավորները ձայնափոխմում են զրիթի միշտ:

58. Առանձնապես նկատելի է բարբառամ բառավերի ի ձայնավորի վերածումը ա ձայնավորի, և այդ թե՛ հայերեն և թե՛ սուսը բառերի, թե՛ հոլովումների և թե՛ խոնարհումների ժամանակ: Հատկապես Հացի-Հարիբիի մասնաճյուղում բառավերջում երբեք ի ձայնավորը չի պատեհում, որը արդյունք է հնչման հեշտության, նկատելով, որ բառավերքում ա ավելի հեշտ է հնչվում քան ի:

59. Նկատելի է նույնպես խոր բաղաձայններից առաջ (ն, դ, թ) ա ձայնավորի վերածումը իւ-ի կամ օ-ի, իսկ գ, կ թրթունը բաղաձայնները բառավերջում անպայման դառնում են և խոր հնչման:

60. Զայնափոխման մեջ էական դեր է խաղում շեշտադրության փոփոխումը: Այն սիստեմը, որը սահմանված է, շեշտադրության փոփոխմամբ վերածվում է ուղիշ սիստեմի (տե՛ս § 36, 37, 46, 47, 54, 55):

Նույնպիսի նշանակություն ունի նաև ձայնական ներդաշնակությունը (տե՛ս § 13):

Բառակազմությունը, հոյովումը և ածանցումն էլ ազդում են ձայնափոխման վրա. որովհետև այդ պարագաներին փոփոխմ է շեշտադրությունը. նույն է և պարագան խորհման դեպքում (տե՛ս § 16):

(Հարուեակելի)